

# ՍԵՂԱՆԱՊԵՏԸ՝ ՍՕՍ ՍԱՐԳՍԵԱՆ (ՄԱՍ Բ.)

*Posted on December 24, 2021 by Keghart*



Category: [Opinions](#)



## Սովաքու ճիրանի, Երեւան, Նոյեմբեր 2021

Գրութեան առաջին մասը՝ [Սեդանապետը՝ Սոս Սարգսեան \(մաս Ա.\)](#)

Երեւան, 1980, Սեպտեմբեր:

Հեռաձայնեցի...

- Սոս ջան՝ հիւրեր ունեմ: Դասընկերուհիներս են, որոնք եկել են Այնճարից ու խնդրում են հանդիպել քո հետ:

- Հասկացայ, բայց ինչացո՞ւ են, ինչո՞ւ են եկել:

- Սկզբից ասեմ, որ ընթացիկ զբօսաշրջիկներ չեն, այլ՝ ուսուցչուհիներ, եկել են վերապատրաստման ու հայրենի մշակոյթը տեղուոյն վրայ սերտելու... :

- Լաւ, որ եղաքս է նրանց տունս կը բերես:

Պայմանաւորուեցանք, յաջորդ օրն իսկ երեկոյեան Սօսի մօտ էինք: Ան գրկաբաց ընդունեց մեզ ու բնականաբար ինչպէս կարգն էր, սեղան բացուեցաւ: Բոլոր ներկաներուն կենացը խմելէ ետք, իբրեւ ամենաթանկագինը, վերջին կենացը վերապահեց հօրեղբօրս աղջկան՝ Վիքթորիա Հերկելեանին ու Մարո Ֆիլիանսետեանին: Բոլորին բաժակները նորոգելէ ետք, ըսաւ.

- Ես ձեզ պատիւ եմ տալիս ոչ թէ նրա համար որ դուք իմ մօտիկ ընկերոջ մօտիկ անձնաւորութիւններ էք, այլ նրա համար որ ուսուցչուհիներ էք: Ասում են թէ «Ուսուցչութիւնը ապերախտ գործ է»: Այդպէս մտածողները անձնասեր ու այլասերած մարդիկ են: Իրականութեան մէջ ՈՍՈՒՅՉՈՒԹԻՒՆԸ ոչ միան շնորհակալ ու չափազանց կենսական մասնագիտութիւն է, այլ նաեւ «Ազգային Սրբազան Առաքելութիւն»: Ձեզ վստահուած է սերունդներ դաստիարակել ու նախապատրաստել ապագայ գիտակից ու անձնուէր հայորդիներ, որոնք ապագայում կը գնահատեն ու վարձահատոյց կը լինեն ձեզ... և ազգին... չկասածաճէ՛ք... դուք յանձնառու «Առաքեալներ» էք.... դրա համար եկեք, ձեր հմայքով գեղեցկացրէք հայրենիքն ու յաճախ այցելէք...:

Այսպէս էր Սօսը: Անոր բովանդակալից բաժակաճառերը անհատին արժէքը բացայայտելէ ետք, կեանքը իմաստաւորելու ուժ ու կորով կը հաղորդէին անոր:

\*\*\*

Եղեգնաձոր, 1980, Աշուն:

Կը յիշեմ Նոյեմբեր 14-ին էր, Մուշեղ Գալշոյանի հետ պատահած անհեթեթ արկածին օրը: Համաձայն նախապէս մեր պայմանաւորուածութեան, այդ օր Մուշեղը եւս մեզ հետ պիտի գար, սակայն անտրամաբանական պարագաներու բերումով, եղաւ այն ինչ որ պատահեցաւ անսպասելիօրէն ու անշուշտ... խիստ ցաւալի... : Այս մէկը ուրիշ

**պատմութիւն է... գրած եմ արդէն... Անցնինք:**

Շրջանի որսորդապետ՝ Սամուէլի հրաւերով ու կազմակերպութեամբ Եղեգնաձոր մեկնած էինք որսի՝ Վարուժան Խտըշեանի, Մարտիկ Պոյաճեանի եւ Պօղոս Գասապեանի հետ, մեր հետն էին Նաև Սոս Սարգսեանն ու Ռազմիկ Դաւոյեանը:

Գեղանկարիչ՝ Բագրատ Գրիգորեանը, որուն ազգականն էր Սամուէլը, տեղեկացուցած էր թէ անոր պապը եղած էր Նժդեհի զինուորներէն, որուն համար չափազանց հպարտ էր...: Հոն հասնելէն ետք, երբ տղոց ներկայութեան հարցուցի իր մասին, ան ըսաւ.

- Այո, դա ճիշդ է, կարող էք տեսնել ու նաեւ զրուցել հետը: Նա ներսումն է եւ գիտի որ դուք գալու էք, սակայն խնդրում եմ իր ներկայութեան այդ մասին չխօսէք, որովհետեւ նա վստահութիւն չունի մեր սերունդի եւ յատկապէս՝ սփիւռքահայ ուսանողների վրայ...:

Թէև հաճելի չէր նման բան լսելը, սակայն բոլորս՝ ներառեալ Ռազմիկն ու Սօսը, խոստացանք որ նկատի կ'առնենք այդ «փափուկ» հանգամանքը... :

(Ճիշդ հասկցուելու համար, հոս հարկաւոր է փակագիծ մը բանալ: Այդ օր մենք որսի քողի տակ, Սօսի առաջնորդութեամբ եկած էինք նաեւ ստուգելու, թէ իրապէ՞ս ազերիները նոր գիւղ մը հիմնելու համար, հովիւ մը եւս (իր պարագաներով), ուղարկած էին Եղեգնաձոր... : Այդ տարիներուն ազերիները ծրագրուած ձեւով կեցութեան վայրեր, կամ ուղղակի գիւղեր կը հիմնէին Չանգեզուրի մէջ, շղթայի նման Ազրպէյճանը Նախիջեւանին կապելու հեռանկարով... : Սամուէլի ցուցմունքներով գացինք գտանք այդ վայրը, ուր արդէն իսկ տասնեակէ մը աւելի Ազերի քոչուոր ընտանիքներ հաստատուած էին... : Երբ Երեւան վերադարձանք մեր ստացած տեղեկութիւնները փոխանցեցինք «Առ որ Անկ է»: Այս մէկը եւս ուրիշ պատմութիւն է, որուն մասին այլ առիթով կը գրեմ):

Մեր որսը յաջող էր: Օդը զով՝ ու հաճելի: Սեղանը պատրաստուեցաւ Սամուէլէնց բակը, գետնափոր թոնիրի կողքին, որ մեր՝ ու յատկապէս Վարուժանի յատուկ ուշադրութիւնը գրաւեց... : Հրակիրուած էին նաեւ քանի մը հարեւաններ ու մերձաւորներ:

Թէև ջերմութեամբ ընդունուեցանք ներկաներուն, յատկապէս Սամուէլ Պապին կողմէ, սակայն պաշտօնական ու պրկուած վիճակ մը կը տիրէր սեղանի շուրջ: «Ինչ որ տեղ ինչ որ բան սխալ է» պիտի ըսէր քանքարաւոր գրողը՝ Սարոյեան:

Ռազմիկը, որ առաջին անգամն էր որ որսի կու գար մեզ հետ, ընթացքին խօսք առաւ եւ պատմելէ ետք, թէ ինք ինչպէ՛ս այդ օր կաքաւ մը որսաց ու խղճահարուեցաւ, յայտարարեց.

- Մի անգամ էլ ես թռչունի վրայ չեմ կրակի:

Սօսը առանց յապաղելու ոտքի ելաւ ու ըսաւ.

- Ռազմիկ ջան: Ես հասկանում եմ քո մարդկային վերաբերմունքը կենդանիների

հանդէպ, սակայն միւսէն էն ժամանակ, որ մենք շրջապատուած ենք թուրքերի նման վայրագ թշնամիներով, հայ մարդը կրակել պիտի իմանայ... :

Ու պահ մը լռելէ ետք, անելցուց.

-Նկատի առէք, որ «**Որսորդը պատրաստ գինուոր է...**»:

Սօսի պատասխանը ջերմ ընդունելութիւն գտաւ ներկաներուն, յատկապէս Սամուէլ Պապին մօտ, որ տանուտերի իրաւունքով, բազմաձեւ եր սեղանի աջ շարքի կեդրոնը Սօսի կողքին: Ան պատկառելի արտաքինով, ինքնավստահ ու տիրական ներկայութիւն եր, որ արժանացած կը թուէր ըլլալ գիւղացիներու համակրանքին ու ակնածանքին: Սօսը պահը յարմար նկատելով շարունակեց.

- Հիմա առաջարկելու եմ մի բացառաիկ կենաց: Եթէ չլինէր Նժդէհը, Սիւնիքը չէր լինի, սակայն եթէ չլինէին Նժդէհի գինուորները, ոչ Նժդէհը կը լինէր եւ ոչ էլ Չանգեզուրը: Այսօր մենք այստեղ ենք շնորհիւ Նժդէհին ու իր քաջարի կամաւորներին, որոնցից ոմանք, նրանց երեխաներն ու թոռները վստահաբար մեր մէջ են գտնուում... : Նժդէհն ասել է որ «**Չանգեզուրը Հայաստանի ողնաշարն է**»: Առանց այս զանգեզուրեան ողնաշարի չի կարող Հայաստան գոյութիւն ունենալ: Ինքն ու իր գինուորները ապրում են մեր մէջ... ձե՛ր մէջ...: Հայրենիքի «ողնաշարի» տերը դուք էք, դուք էք պահելու այն: Ուրեմն՝ ... ուրեմն խմում ենք Նժդէհի ու իր գինուորների կենացը, թէ նրանց, ովքեր վերելից հսկում են մեր վրայ ու յատկապէս նրանց՝ ովքեր մեր մէջ են այսօր այս պահին... :

Ներկաները բնագոյաբար ոտքի ելան ու հայեացքները ուղղուեցան դէպի տանուտերը: Սօսը ցուցականօրէն գաւաթը խփելէ ետք անոր գաւաթին, ըսաւ.

- Այս կենացը հարկաւոր է ծաղկեցնել Նժդէհի երգով... :

Ու մենք ոտքի վրայ սկսանք. «Արագի ափին ծնած ընկեր...»: Պարզուեցաւ որ ներկաները գրեթէ բոլորն ալ ծանօթ էին երգին: Սամուէլ Պապը եւս աշխուժօրէն կը մասնակցէր... ընթացքին սակայն աչքի տակով կը հետեւէր մեր երգեցողութեան... շատ հաւանաբար ստուգելու համար թէ մենք իսկապէս ովքեր էինք... : Երգի աւարտին, ան անխօս համբուրեց Սօսի ճակատը... տեղէն ելաւ, դանդաղօրէն մօտեցաւ գետնափոր թոնիրին... բանալ տուաւ կափարիչը, գաւաթը բարձրացուց դէպի երկինք... ու ծիսական երկիւղածութեամբ նոան գինին հեղեց թեժացած թոնիրին մէջ... դանդաղօրէն, յայտարարելով.

- Կենացդ Սպարապետ... :

Ապա մէկ առ մէկ «մեզ չորսիս» ճակատներէն եւս համբուրելէ ետք, Սամուէլ Պապը բարձրաձայն դիմեց Սամուէլին:

-Ապրե՛ս, տղաս, «հալալ» ընկերներ ունես... :

## Ամեն ինչ հասկնալի էր...

Բնականաբար ազգային-յեփոխական երգերը իրարու յաջորդեցին...: Չես գիտեր ե՞րբ եւ ինչպե՞ս Սամուէլէնց բակը լեցուեցաւ գիւղացիներով ու խնճոյքը վերածուեցաւ ժողովրդական տօնի...:

Այսպէս էր Սօսը: Ան չափազանց սիրուած էր ժողովուրդին կողմէ: Ո՞ր որ յայտնուէր տեղի կ'ունենային ինքնաբուխ ազգային տօնախմբութիւններ... : Ան գիտէր ուր, երբ եւ ինչպէս արժանաւորները գնահատել, ժողովուրդի հայրենասիրական զգազումները խթանել ու խանդավառութիւն ստեղծել:

**There are no comments yet.**